բակների մօտ Ճորոխին խառնւում Իշկալա (միջնաբերդ) առուակը որ իջնում է Եանղունլի, Սաուղուրդի եւ Ցկարեստի լ–ից, ակունքում անուանւում է Պալլգի (ձկնոտ) կամ Խուրշիդ (արեւաձկնային)։ Այս առուակը ընդունում է Զէյդէն, Զատ, Զիվտէ Բէօփրի, Դից–գեղ (Դիզքէօյ), Մաքրիէտի, Կոստանէի առուները, որոնք ոռոգում են համանուն գեղերն եւ նրանց պարագաների հանդերը։ 1872ի քարտէզի վրայ այս վտակն անուանւում է Զայիր–սու (մարգերի առուակ) այն ընդարձակ Մարգերի անունով, որ պատած են վտակը, իրենց մշտադալարով եւ գեղն էլ անուանւում է Մարգագետին (Մակրիեսի)։ Այս վտակի մէջ թափւում են Գուրչատի, Բաշքեօյ (գլխաւոր գեղ) առուակները ձախից, Ազուրոյ, Պանչուրետ, Մամանիտ՝ աջից, որոնք միանալով Մարդաստանում կուտակուած ջրերին՝ խառնւում են Ճորոխին։

Իշկալա անունն առաջացել է վտակի ակունքից ո՛չ շատ հեռու բարձունքի վրայ հիմնուած բերդից–միջնաբերդից, պարսպից եւ երկու հին մեծ քարէ կամուրջներից, որոնք դարեւոր անցեալ ունին։ Անշուշտ այս կալուածքը երկրորդական, երրորդական իշխանի յատուկ չէնք ու կառուցուածք չէ՛, այլ առաջնակարգ, թագաւորական տանն է պատկանել, մինչեւ որ պեղումներ չկատարուին, չի պարզուել Իշկալայի եւ Մակրիէ–